

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի
ղեկավարի տարեկան հաշվետվությունը՝ 18.07.2014թ.-ին, ժամը 14-00-ին

Նախագահությամբ՝ Ռ.Ֆ.Մարգարյանի

Քարտուղարությամբ՝ Գ.Մ.Հովհաննիսյանի

Մասնակցությամբ՝ Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ՝ Վ. Աբրահամյանի

Արմավիր գյուղական համայնքի հաշվետու զեկուցմանը ներկա են գտնվում համայնքի ավագանու անդամները, համայնքի հիմնարկ-ձեռնարկությունների տնօրենները և աշխատակիցները, ինչպես նաև համայնքի 35 բնակիչների:


Լսեցին- Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավար՝ Ռ.Մարգարյանի 2014թվականի 1-ին կիսամյակի հաշվետու զեկույցը:

Պարոն՝ Ռ. Մարգարյանը հաշվետու զեկույցում ներկայացրեց 2014թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ, բյուջեի մուտքային և ծախսային կատարողականի, ինչպես նաև համայնքին վերաբերվող այլ հիմնախնդիրների մասին, այն որ 2013թվականի մայիսի 12-ին տեղացած կարկուտից և այս տարվա ցրտահարությունից տուժված համայնքի տնտեսություններից դժվարությամբ է գանձվում հողի և գույքահարկի վարձավճարները, քանի որ այդ տնտեսությունները գտնվում են դեռևս ճգնաժամի մեջ: Համայնքում շաբաթ երկու օր կատարվում է աղբահանություն: Հաճախակի փոխվում են խմելու ջրի վթարված խողովակները, ինչպես նաև կատարվում է խմելու ջրի հաճախակի քլորացում: Համայնքի ենթակայության տակ են գտնվում Արմավիրի մանկապարտեզը, Արվեստի դպրոցը և մշակույթի տունը, որոնք ներկա դրությամբ գործում են և ֆինանսավորվում են համայնքի բյուջեից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Մարգարյանի հաշվետու զեկույցից հետո արտահայտվեցին համայնքի ավագանիներ՝ Թամարա Պողոսյանը և Արմեն Սարգսյանը, որոնք նշեցին, որ իրոք համայնքում կատարվել է մի շարք բարեփոխումներ, սակայն համայնքը ունի ցավոտ կողմեր, որոնցից է՝ խմելու ջրի ջրագծերի վերափոխումը, Արմավիր եկեղեցու կառուցումը և Արմավիրի մանկապարտեզի վերանորոգումը:

Այնուհետև ելույթ ունեցավ մարզպետարանի գյուղվարչության աշխատակից Վ.Աբրահամյանը, նա առաջարկեց համայնքի բնակիչներին ակտիվություն ցուցաբերել հողի հարկի վարձավճարների մուծման գործընթացում, որը կնպաստի բյուջեի կատարողականին և կկարողանանք լուծել համայնքի բաց թողնված հիմնախնդիրները:

Արմավիրի մարզպետարանի գյուղվարչության բաժնի պետ՝ Վ.Աբրահամյանը համայնքի ղեկավարի 2014թվականի 1-ին կիսամյակի ներկայացրած հաշվետվությունը գնահատեց դրական:

Համայնքի ղեկավար՝  Ռ.Մարգարյան

Քարտուղար՝  Գ.Հովհաննիսյան

Իսկականի հետ ճիշտ է:

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 2014 թ-ի
համայնքի ղեկավարի 1-ին կիսամյակի

Համայնքի համայնքային բյուջեի եկամուտների և ծախսերի կատարողական՝ 2014թվականի
1-ին կիսամյակի կտրվածքով. առ. 01.01.2014-01.07.2014թ.

Եկամուտների տեսակը	տարեկան պլան	1-ի կիսամյակի կատարողական
Հողի հարկ	8958,2	1507.4
Գույքահարկ	3070.0	323.7
Վարձակալական վ/վ	2190.8	409.8
Դոտացիա	48076.0	24037.8
Տեղական տուրքեր	120.0	6.0
Դրամաշնորհ	3884.6	1013.9
Ընդամենը վարչական բյուջե	68539.6	27298.5

Վարչական բյուջեի ծախսեր.

Արմավիրի գյուղապետարանը 2014 թվականի 1-ին կիսամյակի կտրվածքով կատարել է
հետևյալ ծախսերը:

- 1.Վճարվել է ընթացիկ աշխատավարձ 10919.7 հազ.դրամ
- 2.Անապահով ընտանիքների օգնության գումար է վճարվել 800.0 հազ.դրամ
- 3.Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում 6174.8հազ.դրամ
- 4.Մանկապարտեզ 1060.0հազ.դրամ
- 5.Արվեստի դպրոց 8311.6 հազ.դրամ

Ֆոնդային բյուջեի
տարեկան պլան 27626.1հազ.դրամ

1-ին կիսամյակի կատարողական
60.0 հազ.դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ռ.Ֆ.ՍԱՐԳՍՅԱՆ